

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	կիսավարտիքներ	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Բամբակյա կիսավարտիք: Կիսավարտիքի գործվածքը տրիկոտաժե, բաղադրությունը 95% բամբակ, 5% Էլաստան, 1մ2 մակերասյին խտությունը ոչ պակաս 180գր, սև գույնի: Բաղադրության, քաշի թույլատրելի շեղումը 4%: Կիսավարտիքը կազմված է առաջամասից, ետնամասից և շեքամասից: Միացման կարերը՝ կրկնակարերով /ավերլուկ/: Առաջամասի մեջտեղում՝ վերևից ներքև դեպի շեքամասը մշակված է կրկնակի տրիկոտաժե գործվածքով՝ մեջտեղում լայնությունը 9 սմ առանց զարդակարի՝ ուղիղ կարով: Փողքերի ներսի ծալվածքը 2 սմ, եզրագծված 4-5 մմ լայնությամբ կրկնակի զարդակարով: Կիսավարտիքի վերին եզրը ներսից /փակ տեսակի/ մշակված է 2սմ լայնությամբ Էլաստիկ ժապավենով: Կողքերից՝ գոտկատեղի վերին եզրից մինչև փողքի ներքին եզրը, սկսած 48 չափսից,

				<p> պետք է լինի ոչ պակաս 29 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 1սմ: Գոտկատեղը բացված վիճակում հավասարեցնելով կիսավարտիքի միջնամասի լայնության հետ, սկսած 48 չափսից պետք է լինի ոչ պակաս 38 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2 սմ: Շեքամասի լայնությունը բացված վիճակում 6.5 սմ, իսկ երկարությունը` 17 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 0.5 սմ: Փողքի ներքևի եզրի լայնությունը սկսծ 48 չափսից պետք է լինի ոչ պակաս 20 սմ, հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 1 սմ: Բուր պարամետրերի թույլատրելի շեղումը մինչև 4%: Կիսավարտիքի ներսի կարի տակից կարվում է չափսի ստուգիչ պիտակ: Արտադրվում են 44-56 չափսերի /48-25%, 50-27%, 52-27%, 54-15%. 56-6%/: Արտաքին տեսքը` համաձայն հաստատված նմուշի: Փաթեթավորումը` հակերով, հակերի մեջ` մինչև 400 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ` 10 հատ: Հակերը` պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը արտադրման ամիսը և տարեթիվը: </p>
--	--	--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԸԾ-ՏԼՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
11				